

- 191 Յայն իսկ աւուր օրհներ զիս նա
 Կրրօնաւոր կամ աբեղայ,
 Տալով վեղար, փիլոն ապայ,
 Ըստ մեր ծիսի հին եւ ներկայ:
- 192 Յառնուին իմ կարգ ես եւ Սարգիս
 Դէմ յանդիման խրմբեալ Ազգիս
 Չանիծէաք միշտ զօրհնելիս,
 Չընդունէաք նըզովելիս:
- 193 Այս ինչ թեպէտ ներհակ թուիւր
 Չարդի Հայոց արարմանց թիւր,
 Այլ Սարգիս մեր հերքեալ բզժուռ՝
 Չուղղորդն առնէր բերեալ փաստ կուռ:
- 194 Եւ յետ երից ամոց անդէն,
 Որպէս Հայոցս է կարգ լ' օրէն,
 Տայր նա պատուէր ինձ հանրօրէն
 Քարոզ կարգալ բարունօրէն:
- 195 Արդ յետ ամաց Սիմոն յարդի
 Կաթուղիկոսն Էջմիածնի
 Խորհէր առնել զ՞նա իւր գահի
 Մեծ նուիրակ ի շէն Պօլսի:
- 196 Չայս կամք իւր նախ հաղորդէր նա
 Վարդապետին Չաքարիայ,
 Մերթ նուիրակ Էջմիածնայ,
 Արդ Պատրիարզ Բիւզանդիայ:
- 197 Որում գրբէր խօսիլ թագուն
 Ընդ Սառաֆեան Սարգիս բարուն,
 Որոնելով զ՞հաճոյս նորուն՝
 Առ մըտածեալ իւր խորհրդոյն:

1771